ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

<<Հեքիաթն ու իրականությունը մայրենիի մեծ աշխարհում>>

Կատարող՝ Երևանի Ա.Նավասարդյան անվան թիվ 196 հիմնական դպրոցի ուսուցչուհի Ֆարիդա Ռազմիկի Գալստյան

Գիտ.ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու,պրոֆեսոր Գայանե Խալաթյան

Երևան – 2022թ.

Հեքիաթն ու իրականությունը մայրենիի մեծ աշխարհում

Մաս առաջին

Խոսքի մասերի տունը՝ ձևավորված քարանձավի նման:

Սեղանին դրված է թեյի սպասք , մրգաման և մոմ:

Բայը և գոյականը աշխատում են, մյուսները զրուցում են և թեյում:

Դուռը ծեծում են:

ԲԱՌԱՐԱՆ (զարմացած) – Վա՛հ,էս ո՞վ էր:

ԲԱՅ(դժգոհ գնում է դեպի դուռը) —Օ՛ֆ,չեն թողնում հանգստանանք...

Շեմքին երևում են թրջված ու խեղճացած երկու փոքրիկներ:

ՆՈՐԵԿՆԵՐ —Ողջու՛յն ձեզ, բարի՛մարդիկ:

ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅՐԻԿ —Բարև՛ ձեզ, օտարականնե՛ր, նե՛րս եկեք, հանգստացե՛ք,տեսնենք՝ ովքեր եք,ինչ եք ուզում:

ՆՈՐԵԿՆԵՐ —Մրսում ենք, թեյ կարելի՞ է:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐԻԿ —Իհարկե՛, հենց հիմա:

ԱԾԱԿԱՆ (թվականի ականջին շշնջում է)— Օհո՛,ինչ էլ երեսով են...

ԹՎԱԿԱՆ (ցածրաձայն)—Գոնե մի քիչ սպասեին...

Բայը թեյ է պատրաստում,իսկ Քերականություն մայրիկը հյուրասիրում է:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ —Ահա՛ ձեզ թեյ, անու՛շ արեք:

Թեյելուց հետո նրանցից ավագը պատմում է.

—Ինձ անվանում են Ձայնարկություն:Այս աշխարհում ապրում եմ ես շատ վաղուց,իսկ որոշ գիտնական մարդիկ չեն ուզում ճանաչել :

Խնդրում ենք՝ մեզ էլ ընդունեք ձեր ընտանիքը: Հավատարիմ կլինենք, ազնվորեն կծառայենք ,ինչպես բոլորդ:

ԿԱՊ (զարմացած) —Ա՛յ քեզ բան...

ԴԵՐԱՆՈՒՆ (զայրացած) —Թո՛ւ, ինչ համարձակն է...

ԹՎԱԿԱՆ (հռհռում է) —Ձա՛ն, դուք էիք պակաս:

ԲԱՌԱՐԱՆ (ձայնը բարձրացնում է) —Բավակա՛ն է,թույլ տվեք լսել

նաև նրա ընկերոջը:

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ —Ես էլ վաղուց եմ ապրում աշխարհում: Ինձնով մարդրկ իրենց վերաբերմունքն են արտահայտում,ինձնից օգտվում են, բայց չեն ճանաչում:

Խնդրում եմ ,գոնե դուք ճանաչեք և ընդունեք մեզ ձեր ընտանիքը:

ԱԾԱԿԱՆ(հեգնանքով) —Դե իհա՛րկե,կընդունենք...

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ —Ճիշտն ասած,դժվար բան եք ասում: Անպայման պետք է մտածենք այդ մասին:(Դառնում է զավակներին) —Դուք գնացեք մյուս սենյակ, այստեղ խորհրդակցելու ենք:

8 խոսքի մասերն անցնում են մյուս սենյակ:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ —Իսկ հիմա ձեզ ազատ զգացեք և հանգիստ ու հանգամանալից պատմեք մեզ ,թե դուք ինչ կարող եք անել և

արդյո՞ք որևէ օգուտ կարող եք տալ՝դառնալով մեր ընտանիքի անդամ:

ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ —Ես ձայնարկությունն եմ:Դուք բոլորդ իմ կամ ընկերոջս ծառայություններից եք օգտվում,բայց ուշադրություն էլ չեք դարձնում,թե մենք որքան մեծ դեր ունենք ձեր խոսքի մեջ:

Մենք կարևոր ենք,առանց մեզ դժվար է առաջ գնալ,քանի որ ձեր զգացմունքները, տրամադրությունը,դատողական վերաբերմունքը մենք ենք արտահայտում:ՈՒրախանում եք՝ ՁԱ՛Ն,Օ՛Հ,ՕԽԱ՛Յ եք ասում,զզվում եք, դժգոհում՝ ՓՈՒ՛, ՎԱ՛Հ,Օ՛Ֆ,ԹՈՒ՛Հ, Ի՛Հ եք ասում,իակ երբ զարմանում եք՝ ՕՀՕ՛,ՊԱ՛հ ,ՎԱ՛Հ ,Ա՛Յ-Ա՛Յ եք ասում:

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ- Որևէ բան եք հաստատում՝ ԻՐՈ՛Ք, ԻՍԿԱՊԵ՛Ս, ԻՀԱ՛ՐԿԵ, ԱՐԴԱՐԵ՛Վ եք ասում,կասկածում եք՝ ԿԱՐԾԵՄ, ԵՐԵՎԻ, ԳՈՒՑԵ, ՄԻ՞ԹԵ, ԱՐԴՅՈՔ, ԹԵՐԵՎՍ բառերն եք օգտագործում,սահմանափակում եք՝ ԳԵԹ, ԳՈՆԵ, ՄԻԱՅՆ, ԼՈԿ բառերն եք մեջ բերում,իսկ երբ ժխտում եք՝ Ո՛Չ, ԱՄԵՆԵՎԻ՛Ն, ԵՐԲԵ՛Ք բառերն եք ասում:

ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ—Ոչ միայն մարդիկ,կենդանիներն էլ են օգտվում ինձանից ՝ ԾԻ՛Վ-ԾԻ՛Վ, ՄԻԱՈ՛Ի, Ո՛Ի-Ո՛Ի, Բ՛Ա, ԾՈՒՂՐՈՒՂՈ՛Ի կանչելով , առարկաները նույնիսկ՝ ԶԸ՛ՆԳ, ԴԸ՛Ռ, ՏԸԿ-ՏԸԿ ձայներ արձակելով:

Բառարանն ու քերականությունը իրար երես են նայում:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ—ճիշտ է,որ առանց ձեզ դժվար է արտահայտիչ խոսել:Ձայնարկության մասին խոսք առաջ էլ եղել է,վերաբերականի գործն է դժվար...

ԲԱՌԱՐԱՆ—Եկել հասել է տուն,էլ ի՞նչն է դժվար:(ՈՒրախ և հաստատակամ) Երկուսին էլ պետք է ընդունել:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ժպտալով,զվարթ)- Մեր զավակների թիվը դարձավ տասը: Պետք է նշել այս իրադարձությունը: (ձայնը

բարձրացնելով) Եկե՛ք, սիրելի՛ իմ զավակներ,մենք ուրախ նորություն ունենք ձեզ հայտնելու:

ԲԱՌԱՐԱՆ—Դուք աղմուկ չե՞ք լսում,նրանք կարծես վիճում են:(բարձրաձայն)—Եկե՛ք,եկեք տեսնենք՝ ի՞նչ է պատահել,ինչո՞ւ եք վրդովվել:

Ներս են գալիս 8 խոսքի մասերը և նստում են իրենց տեղերը:

ԲԱՌԱՐԱՆ—Սիրելի՛ մեր զավակներ,լավ լուր ունենք ձեզ հայտնելու: Ես և Մայր քերականությունը որոշեցինք,որ այսօրվանից մեր ընտանիքի անդամների թիվը,արդարացիորեն,պետք է ավելանա ևս երկուսով:Այսօրվանից Ձայնարկությունը և Վերաբերականը դառնում են մեր բազմանդամ ընտանիքի հավասարազոր անդամներ,ինչպես ձեզանից յուրաքանչյուրը: Բա՛յ,խնդրում եմ՝երկու աթոռ ևս ավելացրեք ձեր աթոռների կողքին:

Բայը Գոյականի հետ գնում է և 2 աթոռ են բերում դնում իրենց աթոռների կողքին: Քերականությունը, Ձայնարկության և Վերաբերականի ձեռքերը բռնած, մոտենում է աթոռներին:Բոլորը ոտքի են կանգնում և ծափահարում՝ վանկարկելով. <<Շնո՛ր-հա՛-վո՛ր>>:նստում են:

ԲԱՌԱՐԱՆ-- Սիրելի՛ զավակներս, ես ձեր դեմքերին, այնուամենայնիվ, ուրախություն չեմ տեսնում: Ի՞նչ է պատահել, դուք մինչև մեզ միանալը վիճում էիք. ինչու՞, ի՞նչ ունեք իրար հետ կիսելու;

ԹՎԱԿԱՆ – Մենք չէինք վիճում,ուղղակի ես դերանունին հարցնում էի,թե օրինակ ինքը ի՞նչ խոսքի մաս է, երբ մի որոշակի իմաստ չունի և ու ասես փոխարինում է:

ԴԵՐԱՆՈՒՆ(վրդովված) Իսկ դու՞, ես կարող եմ Գոյականի, Ածականի, Մակբայի, Շաղկապի, նույնիսկ քո դերը կատարել, իսկ դու ի՞նչ կարող ես անել,(հեգնանքով) միայն թիվ ցույց տալ,

Գոյականի վրա դրվել: Ես էլ եմ դրվում,Ածականն էլ: Լավ չի՞ լինի, որ քեզ անվանենք Ածական, կամ երկուսիդ՝ մականուն:

ՇԱՂԿԱՊ (զայրացած) Դա քո գործը չէ.Դու քեզ բոլորովին չես կորցնում. նախադասություններն իրար կապելու իմ գործն էլ ես անգամ խլում:

ԴԵՐԱՆՈՒՆ (հեգնանքով) Դու էլ խոսելու իրավունք չունես,դու էլ ես ավելորդ, դու կապ ես. Ընդամենը կապում ես նախա դասությունները կամ նրանց անդամները, քեզ ո՞վ է առանձնացրել:

ՇԱՂԿԱՊ (վճռական) Եթե ես կապ եմ,դու էլ ամեն ինչ ես կամ էլ ոչինչ ես(ծիծաղում է): Քեզ ուղղակի պետք է բաժանեն մյուս խոսքի մասերի վրա և վերացնեն:

ԿԱՊ—Ես խնդրում եմ՝իմ անունը չշահարկել:Ձեզանից ոչ մեկը երևի լավ չի պատկերացնում իմ դերն ու նշանակությունը խոսքի մեջ,ուստի լավ կլինի ինձ հանգիստ թողնեք:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (խիստ)—Վերջապես կլռե՞ք: Ձեր ասածների մեջ ճիշտ բան կա: Ձեր հարցերը դեռ կվերանայվեն, բայց պետք չէ վիճել ու աղմկել: Դուք իրար հետ անգամ չեք կարողանում խաղաղ ապրել՝ առանց վեճերի,բայց զարմանում եք, երբ գիտնական մարդիկ ինչ- որ բան ինչ- որ տեղ շփոթում են:

Ես մի բան հաստատ կարող եմ ասել. Յուրաքանչյուրդ ձեր տեղում կարևոր եք և անփոխարինելի՝ անկախ ձեր տեսքից ու դիրքից, անկախ ձեր ծավալից ու հասակի:Համաձայն չե՞ք:

Բոլորը ոտքի են կանգնում և միաձայն ասում. <<Համաձայն ենք, համաձայն ենք>>:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

————————

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Բեմի ներքևում՝ ծաղիկներ, ծառի տակ՝ նստարան: Նստարանին մոտենում Արմենը, նստում և տետրի մեջ ինչ-որ բան է գրում,ջնջում: Նրան են մոտենում Աստղիկն ու Հովհաննեսը՝ ձեռքերին <<Շտեմարան>> և դասագրքեր:

ԱՍՏՂԻԿ – Արմե՛ն, այդ ի՞նչ ես զբաղված, բայց սպասի՛ր, գիտե՛մ. դու բանաստեղծություն ես գրում, ճի՞շտ եմ...

ԱՐՄԵՆ— Ենթադրենք, հետո՞...

ԱՍՏՂԻԿ—Արմե՛ն, մենք շատ կարևոր ու հետաքրքիր մի տեղ ենք գնում. կգա՞ս մեզ հետ:

ԱՐՄԵՆ—Դե՛, եթե ասեք ուր, գուցե...

ՀՈՎՀԱՆՆԵՍ – Ո՛չ, չենք ասի, քեզ համար թող դա լինի անակնկալ. պարզապես արի մեզ հետ... հետո շատ գոհ կլինես:

Նրանք բարձրանում են բեմ, որտեղ խոսքի մասերի ընտանիքն է: Դուռը թակում են: Բացում է հայր ԲԱՌԱՐԱՆԸ, բարևում է: Արմենը զարմացած էր:

ԵՐԵԽԱՆԵՐ(բարձր դասարանի աշակերտներ) – Բարև՛ Ձեզ:կարելի՞ է:

ԲԱՌԱՐԱՆ – Իհա՛րկե, երեխանե՛ր, համեցե՛ք, նե՛րս եկեք, նստեցե՛ք: Հիմա կգա մայր ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Նրանք ներս են մտնում, նստում: Արմենը շշուկով ինչ-որ բան է հարցնում Աստղիկին:

ԲԱՌԱՐԱՆ—Աստղի՛կ,ընկերոջդ ինչ-որ բա՞ն է հետաքրքրում:

ԱՐՄԵՆ —Այո՛,ես ուզում եմ իմանալ, թե Դուք ո՞ր բառարանն եք՝ հանրագիտակա՞ն, թե բանասիրական:

Դուք՝բառարաններդ, շատ եք օգնում մեզ ,որի համար շնորհակալ ենք...

Ձեր դերը չափազանց բարձր է գնահատել նաև աշխարհահռչակ գիտնական Վոլտերը՝ասելով,թե .<<Բառարանը տիեզերք է այբբենական կարգով:Մյուս բոլոր գրքերը զետեղված են նրա մեջ...»:

ԲԱՌԱՐԱՆ —Շնորհակալությո՛ւն,տղա՛ս,շնորհակալություն,որ կարողանում եք օգտվել և գնահատել բառարանը:

Ես Բանասիրական բառարանն եմ...Ա՛յո, մենք շատ ենք ու տարբեր,բայց բոլորս էլ ձեր օգնականներն ենք...

Գալիս է մայր Քերականությունը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ —Բարև՛ ձեզ, երեխանե՛ր:

Աշակերտները ոտքի են կանգնում և հարգալից բարևում:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ —Տեսնումե եմ,որ այսօր ձեր ընկերն էլ է եկել,ուրախ կլինենք, եթե մեզ այցելողները շատ լինեն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ —Մայր Քերականություն,Արմենը բանաստեղծություններ է գրում. նա ապագա մեր բանաստեղծն է:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ —Ուրախ եմ:

ԱՍՏՂԻԿ —Գիտե՞ս,մա՛յր Քերականություն, այսօր Մայրենիի տոնն է:Ամեն տարի այս տոնը մեծ շուքով է նշվում նաև մեր դպրոցում: Հիմա այստեղ հավաքվել են բազմաթիվ աշակերտներ, ուսուցիչներ և մեծ-մեծ գիտնական մարդիկ:

Գուցե դուք էլ որևէ հարց ունեք,դժգոհություն կամ առաջարկ...

Խնդրե՛մ, կարող եք մեզ ասել, մենք կտեսագրենք,կձայնագրենք և կփոխանցենք նրանց:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ —Իսկապե՞ս, երեխանե՛ր,(վերցնում է հեռախոսը և ուսումնասիրում) շատ լավ, բայց առայժմ ես լռում եմ,թող խոսեն նրանք,ովքեր դժգոհություն ունեն:

ԱԾԱԿԱՆ (ոտքի է կանգնում)—Այո՛, ես նեղացած եմ գիտնական մարդկանցից: Ես՝ ԱԾԱԿԱՆՍ,ԳՈՅԱԿԱՆԻ կողքին կանգնեմ,թե ԲԱՅԻ,ցույց եմ տալիս նրանց որակն ու հատկանիշը: Նախադասության մեջ , իմ դիրքից ելնելով,երբ ինձ տարբեր կերպ են անվանում՝որոշիչ կամ ձևի պարագա,ես չեմ նեղանում: Բայց որոշ գիտնական մարդիկ ինձ վիրավորում են՝ասելով,որ իբր ես մակբայաբար եմ գործածվում,երբ բայի կողքին եմ հայտնվում(նա մոտենում է ԳՈՅԱԿԱՆԻՆ, ապա՝ ԲԱՅԻՆ): ԲԱ՛Յ,խնդրում եմ ասա՝ ես շա՞տ եմ նման ՄԱԿԲԱՅԻՆ:Իմ մազն անգամ չծռվեց,երբ Գոյականից հետո մոտեցա քեզ:

ԲԱՅ—Սիրելի՛ քույրիկ,հանգստացի՛ր,դու ոչ մեկին նման չես և չես էլ կարող գործածվել մակբայաբար:Ես ուրախ եմ,որ երբեմն-երբեմն դու իմ կողքին էլ ես հայտնվում և հաճոյախոսում կամ բնութագրում իմ կատարած գործողությունը:

ՄԱԿԲԱՅ(վրդովված)—Գիտե՞ս, սիրելի՛ ԱԾԱԿԱՆ,ճի՛շտ է, ես այնքան էլ վատ չեմ զգում,որ դու երբեմն իմ տեղն ես զբաղեցնում՝ բայի կողքին հայտնվելով, բայց ինձ էլ դուր չի գալիս,երբ որոշ լեզվաբաններ ասում են, որ դու իբր մակբայաբար ես հանդես գալիս. ես ու՛ր...դու ու՛ր...(հեգնանքով):

ԱՐՄԵՆ—Խնդրու՛մ եմ հանգստացեք, սիրելի ԱԾԱԿԱՆ և ՄԱԿԲԱՅ,

7-րդ դասարանի հայոց լեզվի դասագրքում այդ հարցը արդեն ձեր ուզած ձևով է ներկայացված. այնպես որ կարող եք ուրախանալ...

ԱԾԱԿԱՆ—Իսկապե՞ս,ուրեմն իմ աղոթքները տե՞ղ են հասել...

Շնորհակալությու՛ն, տղա՛ս, շնորհակալություն այն լեզվաբաններին,ովքեր կարողացան ճիշտ կողմնորոշվել:

Օ՛ֆ, այսօր ես հանգիստ կքնեմ (երանությամբ):

ՄԱԿԲԱՅ— Ես էլ եմ շնորհակալ, ես էլ հանգիստ կքնեմ: Մենք այլևս պատճառ չունենք վիճելու:

ԴԵՐԱՆՈՒՆ—Գիտե՞ք, ես էլ եմ վրդովված.նմանատիպ մի բողոք էլ ես ունեմ: Իմ ընտանիքի անդամներից մեկին՝ <<Որ>> հարաբերական դերանվանվանը,չգիտես ինչու, անվանում են նաև <<Շաղկապ>>:Եվ ծիծաղելին գիտեք որն է: Նրանց ընդունած պայմանը՝ <<Որ>>-ի խոսքիմաստային պատկանելիությունը որոշելու համար: Այսպես՝ նախադասության մեջ պիտի փորձես. Եթե նա ստանա Ը հոդը, կնշանակի՝ ԴԵՐԱՆՈՒՆ է,եթե չստանա՝ ՇԱՂԿԱՊ է:

ՈՐԸ այդ դարդից հիվանդացել է, բայց եկել է այսօր և ուզում է խոսել:

ՈՐ— Բարև՛ ձեզ, սիրելի՛ աշակերտներ: Դուք նկարահանու՞մ եք, ուրեմն ես բարևում եմ բոլոր մարդկանց,քանի որ նրանցից յուրաքանչյուրին օրը մեկ անգամ չէ,որ հանդիպում եմ:Ես ձեզ շատ եմ սիրում,բայց չգիտեմ, թե դուք ինչո՞ւ եք ինձ այդքան ցավ պատճառում:

Ամեն անգամ,երբ գրատախտակի մոտ ուսուցիչներն աշակերտներին հարցնում են,թե ես որ խոսքի մասին եմ պատկանում,որ ընտանիքի անդամ եմ,և գրեթե միշտ,սխալ պատասխան ստանալով,սկսում են խորհրդավոր կեցվածքով ,ջանասիրաբար բացատրել, թե եթե հիմա ես <<ը>> հոդը ստանամ,կնշանակի ՝ ես Դերանուն եմ,իսկ եթե չստանամ,ուրեմն Շաղկապ եմ, ես ճնշվում եմ,վատ եմ զգում,զայրանում եմ,տառապում եմ և վերջապես վախենում եմ, որ մի օր հոգեկան խանգարում կստանամ:

Մարդի՛կ,եթե ես իմ մյուս քույրերի ու եղբայրների նման,ստանալով հարցական նշան, դառնում եմ ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ,եթե , ինչպես նրանցից ոմանք,(ինչ,ում,երբ և այլն) ստանալով <<ը>> հոդը,հոլովվում եմ, ինչպես գոյականը և նախադասության մեջ տարբեր պաշտոններ կատարում,եթե նրանց նման կարողանում եմ կապել,հարաբերել բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններն իրար հետ,եթե կարողանում եմ բարդ և ածանցավոր բառեր ստեղծել՝հանդիսանալով բառի լիարժեք բաղադրիչ՝արմատ,(օր՝.որերորդ, որտեղ, որչափ, որքան,,որևէ, որևիցե ,ինչ-որ և այլն) ,ասացե՛ք խնդրեմ, ի՞նչն է խանգարում ձեզ,որ ինձ էլ նրանց նման անվանեք ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ:

Շա՛տ հարգելի գիտնական մարդիկ, խնդրում եմ ազատե՛ք ինձ այս ծանր տառապանքներից:

Ոտքի է կանգնում ԳՈՅԱԿԱՆԸ :

ԳՈՅԱԿԱՆ —Ես էլ եմ նեղացած գիտնական մարդկանցից:

100 տարուց ավելի է՝ վիճում են,վիճում ու այդպես էլ իմ հոլովների քանակի հարցը չեն լուծում: Ա՛խր,ի՞նչ բարդ բան է հասկանալ, որ իմ երեխաներից՝ իմ հոլովներից յուրաքանչյուրը ունի իր յուրահատուկ ձևն ու կառուցվածքը:Ես նրանց՝ բոլորին ի ծնե սիրում եմ,բայց շատ վատ եմ զգում,երբ ձեր կողմից արհեստական ստեղծված այդ խեղճ ՀԱՅՑԱԿԱՆ հոլովին ոչ մի անգամ տեղը չեմ բերում և անընդհատ շփոթում եմ՝մեկ <<ՈՒՂՂԱԿԱՆ>> մեկ էլ <<ՏՐԱԿան>> անվանելով:Ախր ինձ էլ հասկացեք,ես մեղավոր չեմ.նա իր սեփական ձևն ու կառուցվածքը չունի:Մեկ՝ սրան,մեկ նրան նմանվելով՝ ինձ շփոթեցնում և ցավ է պատճառում:Երևի նա ինձնից սեր է հայցում (նրա անունը գուցե այդ է հուշում) բայց, ցավո՛ք,եթե ես նրան չեմ կարողանում ճանաչել,ինչպես կարող եմ սիրել:

Հասկանում եմ,որ եթե մի հարց 100 տարուց ավել իր լուծումը չի գտել,ուրեմն բարդ է,բայց համոզված եմ՝ոչ անլուծելի:

Խնդրու՛մ եմ՝ ինձ էլ ազատեք այս ծանր վիճակից:

ԲԱՌԱՐԱՆ—Լա՛վ, բավակա՛ն է ,Գոյակա՛ն,այլապես այնպիսի տպավորություն կստեղծվի,որ շատ ենք բողոքավոր: Մենք նույնիսկ չհասցրինք զրուցել մեր հյուրերի հետ: Օրինակ՝ ինձ շատ հետաքրքիր է ,թե այդ ինչ գրքեր են նրանց մոտ:

Աստղիկը ներկայացնում է գրքերը:

ԱՍՏՂԻԿ— Սա <<Շտեմարան>> է,որով մենք պատրաստվում ենք ընդունելության միասնական քննություններին,սրանք էլ մեր դասագրքերն են:Մենք դպրոցից ենք եկել:

Մայր Քերականությունն ու Հայր Բառարանը ուսումնասիրում են գրքերը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ—Սիրելի՛ աշակերտներ, ինձ հետաքրքիր է՝դուք գո՞հ եք ձեր դասագրքերից և արդյո՞ք սրանցով աշխատելը բավարար է,որ անցնեք <<Շտեմարանին>> առանց կրկնուսույցի հետ պարապելու:

ՀՈՎՀԱՆՆԵՍ—Դե՛,եթե անկեղծ լինենք, Մա՛յր Քերականություն,իհարկե ո՛չ,այսօրվա մեր դասագրքերը բոլորովին էլ մեր երազածը չեն. Սրանք մեզ չեն կարող օգնել այնքան,որ մենք ինքնուրույն անցնենք <<Շտեմարանին>>:

ԱՐՄԵՆ—Արդարացիորեն պետք է նշենք նաև,որ <<Շտեմարանի>> առաջադրանքներն էլ բավականին բարդ են,և առանց կրկնուսույցի չենք կարող ունեցած դասգրքերով պատրաստվել քննության:

ԱՍՏՂԻԿ—Լեզվաբանական շատ հարցեր էլ կան,որ դեռ համարվում են վիճաբանական:Օրինակ՝ տարբեր քերականների կողմից տարբեր գնահատումներ ունեն նաև ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ կազմության հարցը՝ կապված անորոշ դերբայի հետ:Հատկապես այդ հարցը շատ է խանգարում մեզ նախադասությունների վերլուծության ժամանակ:

Մ.ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ— Ես և Հայր Բառարանը մեծ ցավ ենք զգում,սիրելի աշակերտներ,որ այսօր ձեր դասագրքերը դեռ կատարյալ չեն,և թերություններ շատ կան,որ ձեզ խանգարում են:

Վատ ենք զգում նաև,որ լեզվաբանական վիճելի շատ հարցեր կան,որոնք այնքան ցցուն են դարձել, բայց դեռ սպասում են:

Թող այնպիսի կարծիք չստեղծվի,թե մենք անշնորհակալ ենք և չենք գնահատում գիտնական մարդկանց աշխատանքը: Այո՛, ժամանակին շատ մեծ գիտնական մարդիկ տիտանական աշխատանք են կատարել լեզվաբանության ասպարեզում,բայց ժամանակը կանգ չի առնում,իսկ լեզուն էլ կենդանի օրգանիզմ է և անընդհատ զարգանում է ու փոփոխվում:

Մարդի՛կ, տարբեր են մեր՝ ԳԻՏՈՒԹՅԱՆ, և ձեր՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ, աշխարհները:

Ձեր աշխարհում օրենքներն ու կարգերը ինքներդ եք ստեղծում՝արհեստական, կամային:Մեր աշխարհում օրենքներն ու կարգերը ավելի ազատ ու արդար են,որովհետև բնական են:

Ձեր աշխարհում պաշտոնը գուցե շատ կարևոր դեր ունի մարդու կյանքում:Ձեռք բերելով պաշտոնը՝ մարդը կարծես այն համարում է իր սեփականությունը և երբեմն իր կյանքի գնով անգամ փորձում է այն պահել:

Մեր՝ լեզվաբանության աշխարհում, բառը, անկախ իր խոսքիմաստային պատկանելիությունից,նախադասության մեջ զբաղեցնում է այն պաշտոնը,որի ծառայություններն ի ծնե գիտի և սահուն կատարում է այն, բայց երբեք իր սեփականությունը չի համարում,որովհետև գիտի,որ ուրիշ,հազարավոր բառեր էլ կան,որոնք պատկանում են այլ խոսքի մասերի,բայց կարող են ցանկացած պահի զբաղեցնել նույն պաշտոնը:

Ուստի՝ բառի խոսքիմաստային պատկանելիությունը որոշելու համար նրա՝ նախադասության մեջ կատարած դերը՝ պաշտոնը չէ, որ պիտի ելակետային դառնա:

Շա՛տ եմ խնդրում, գիտնակա՛ն մարդիկ, լավ և ուշադիր ուսումնասիրեք մեր աշխարհը, գրե՛ք ձեր օրենքներն ու կանոնները,բայց զգույշ եղեք,որ պատահաբար կամ անզգուշաբար չխախտեք լեզվի բնական օրենքներն ու կանոնները, արհեստականորեն չսահմանափակեք այս կամ այն խոսքի մասի կամ բառի իրավունքներն ու ազատությունը:

Ժամանակն է արդեն,որ դուք էլ, ինչպես ձեր մեծ ուսուցիչները, չխնայելով ժամանակ ու ջանքեր,ծավալեք այն մեծ աշխատանքը,որի արդյունքում, կշահի լեզվաբանությունը, կլուծվեն բոլոր վիճաբանական հարցերը և վերջապես ամենակարևորը. կստեղծվեն կատարյալ, անթերի դասագրքեր, որոնց այդքան երկար ու անհամբեր սպասում է դպրոցը՝ մեր աշակերտներն ու ուսուցիչները:

Երեխանե՛ր, մենք ավարտեցինք մեր խոսքը:Հուսով ենք,որ դուք այդ ձայնագրությունն ու տեսագրությունը կհասցնեք իսկական հասցեատերերին և, իհա՛րկե, չեք մոռանա մեզ նորից այցելել:

ՀՈՎՀԱՆՆԵՍ—Այս ձայնագրությունն ու տեսագրությունը մենք անպայման կհասցնենք հասցեատերերին,կկատարենք ձեր սուրբ պատվերը և երբեք չենք դադարի ձեզ այցելել: Ցտեսություն:

Աշակերտները ողջագուրվում են նրանց հետ և վերցնելով իրենց գրքերը՝ իջնում են բեմից:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Աշակերտները մոտենում են նստարանին:

ԱՍՏՂԻԿ— Դե՛, բավարարվա՞ծ եք:

ՀՈՎՀԱՆՆԵՍ— Ո՛չ, մենք ավելի շատ շփոթված ենք. այնքա՞ն հարցեր կային պարզաբանելու...

ԱՍՏՂԻԿ— Այո՛, մեր լեզվի վիճաբանական հարցերը շատ են:

ԱՐՄԵՆ—Շատ են,բայց հաղթահարելի, ինչպես որ կյանքում ոչինչ չկա անհաղթահարելի: Համաձայն չե՞ք:

ԱՍՏՂԻԿ— Համաձայնը համաձայն ենք,բայց ինձ հետաքրքրում է,թե այն ի՞նչ բանաստեղծություն էիր գրում,երբ քեզ մոտեցանք...

ԱՍՏՂԻԿ—օհո՛, մեր Արմենը սիրահարված է, կարդա՞մ, Հովհաննե՛ս, Արմենի գաղտնիքները բացե՞մ...

Նրանք ժպտում են, իսկ Աստղիկը կարդում է.

—Սերը հավերժ է, սերը չի մեռնում,

Երբեմն այնքան նա խորն է քնում,

Որ շփոթում ես՝ մեռած համարում:

Սերը հավերժ է, սերը չի մեռնում,

Հիվանդանում է ու ծերանում է,

Տկարանում է, անճարանում է,

Ինչպես այն հոգին,ուր նա ապրում է...

Իսկական սերը հոգու մեջ ծնվում

Ու նրա հետ է միայն մահանում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ— Ինչ լավ ես գրել Արմեն <<Իսկական սերը հոգու մեջ ծնվում ու նրա հետ է միայն մահանում>>: Ասեմ,որ քո տարիքին անհամապատասխան,հասուն մարդու նման ես գրել:

Համոզված եմ՝ մեծ բանաստեղծ ես դառնալու...

ԱՍՏՂԻԿ— Ես էլ եմ համոզված,բայց վախենում եմ,որ նա, երբ մեծ բանաստեղծ դառնա,կմեծամտանա, կգոռոզանա և մեզ կմոռանա...

ԱՐՄԵՆ —Աստղիկ, այդ ե՞րբ ես տեսել,որ մեծ մարդիկ (ձեռքը պարզում է դեպի պատին փակցված մեծ լեզվաբանների նկարները)՝գիտնականները, արվեստագետները մեծամիտ լինեն: Ընդհակառակը՝ մեծ մարդիկ չափազանց համեստ են: (Մոտենում և ձեռքը դնում Հովհաննեսի ուսին)

-Հովհաննե՛ս,եթե դու լեզվաբան դառնաս, կմեծամտանա՞ս:

ՀՈՎՀԱՆՆԵՍ —Եթե մեծ լեզվաբան դառնամ,ինչի մասին երազում եմ, իհարկե ո՛չ, բայց կարո՞ղ եմ արդյոք... Աստղի՛կ, իսկ դու ի՞նչ ես դառնալու:

ԱՍՏՂԻԿ —Պարզ չէ՞, իհա՛րկե մանկավարժ:Դու լեզվի վիճաբանական հարցերը կլուծես, Արմենը բանաստեղծություններ կգրի,ես էլ իմ աշակերտներին կսովորեցնեմ անաղարտ մայրենիով գրել ու կարդալ, ինչպես նաև (ժպիտով դառնում է դեպի Արմենը) արտասանել Արմենի բանաստեղծությունները:

ԱՐՄԵՆ — Այսինքն, դու էլ կդառնաս մեծ մանկավարժ,ում կարիքը մեր դպրոցներում այնքա՜ն զգացվում է...

ԱՍՏՂԻԿ —Եկեք պայմանավորվենք, որ կյանքում ինչ էլ դառնանք, միշտ միասին լինենք և հաճախ այցելենք ՆՐԱՆՑ՝ այս ՍՈՒՐԲ ԸՆՏԱՆԻՔԸ (ձեռքով ցույց է տալիս Քերականության ընտանիքը),

առանց որի ոչ ոք <<ՄԵԾ>> չի՛ կարող դառնալ...

Գրականության ցանկը

1.Հ.Ա. Հարությունյան <<Հետաքրքրաշարժ հայոց լեզու>>

<<Լույս>> հրտ. Երևան-1979թ.

<<Հեքիաթ խոսքի մասերի,եղանակավորիչների և ձայնարկությունների մասին>> էջ147-149

2.<<Հայոց լեզու>> 10-րդ դասարանի դասագիրք

Հեղինակ՝. Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան

<<Բառարանի տեսակները>> էջ 105